

ԿԱՐՄԻՔ

Անժելա Իսրայելի Մինասյանի՝ «Հավանականությունների տեսության եվ մաթեմատիկական վիճակագրության տարրերի դասավանդման առանձնահատկությունները հանրակրթական դպրոցում» վերնագրով ԺԳ.00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (մաթեմատիկա) մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսության մասին

Վերջին տարիներին անդադար քննարկվում են դպրոցական մաթեմատիկական կրթության հիմնահարցերը: Ուղղություններից մեկը մաթեմատիկական կրթության բովանդակության վերանայման հարցն է: Այն պայմանավորված է հատկապես գիտատեխնիկական առաջընթացով ու հասարակական տնտեսական կյանքում մաթեմատիկական գիտելիքների ու մեթոդների կիրառման աճող անհրաժեշտությամբ: Այս առումով Անժելա Մինասյանի ատենախոսությունը բարձր մակարդակով իրագործված երկարամյա հետազոտական աշխատանք է: Այն բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է համակարգչային 167 էջ, հավելվածները կազմում են 24 էջ:

Մեղմագիրը համապատասխանում է ատենախոսությանը և ճշգրտորեն ներկայացնում է դրա բովանդակությունը: Ի նկատի ունենալով այս հանգամանքը և այն, որ սեղմագիրը հասանելի է մանկավարժական հանրությանը, չկա անհրաժեշտություն վերարտադրելու ատենախոսության բովանդակությունը՝ բաժին առ բաժին: Սակայն հարկ ենք համարում անդրադառնալ մի շարք կարևոր դրվագների:

Տպավորիչ են ուսումնասիրված գրականության ցանկը, դրանց վերլուծությունները և արժեքավոր մատնանշումները: Փաստորեն, ցանկացած հարց քննարկելիս ատենախոսը անդրադարձ է կատարում դրան վերաբերվող այլ մասնագետների դիրքորոշումներին: Կարևոր է նաև մի շարք երկրների փորձի ուսումնասիրությունն ու համադրումը՝ ատենախոսության թեմայի շրջանակներում:

Ատենախոսը հետևականորեն հիմնավորում ու զարգացնում է այն տեսակետը, որ ոչ թե ստոխաստիկական գիտելիքների յուրացումն ու դրանք կիրառելու կարողությունների ձեռքբերումն է առաջնային, այլ դրանց միջոցով հավանականային մտածողության ձևավորման ու զարգացման անհրաժեշտությունը: Չի կարելի կարծել, թե սա ինքնըստինքյան ենթադրվող համընդհանուր ընդունված մոտեցում է: Ընդհակառակը, առայժմ մաթեմատիկական կրթության նպատակաուղղվածությունը համապատասխան գիտելիքների սերտումն է, որը ընդամենը պետք է նպաստի մտածողության զարգացմանը, այն էլ՝ լավագույն դեպքում:

Վերջապես ոչ միայն կարևորված է, այլ նաև իրագործված է այն մտտեցումը, որ մաթեմատիկական կրթության յուրաքանչյուր բաղադրիչ ունի իր առանձնահատկությունը և այն յուրացնելու համար անհրաժեշտ է ընտրել ուսուցման յուրահատուկ սկզբունքներ: Աշխատանքում ատենախոսի կողմից առանձնացվել են այն սկզբունքները, որոնք համապատասխանում են ստոխաստիկական գիտելիքների ուսուցմանը և հավանականային մտածողության ու մտածելակերպի ձևավորմանը:

Առաջարկվող մեթոդական համալիրը ներկայացված է նպատակաուղղվածությամբ, բովանդակային բաղադրիչով, սկզբունքներով և մեթոդական զինանոցով: Կարելի է առանձնացնել նաև տարբեր նպատակների ծառայող տարաբնույթ խնդիրների ընտրությունն ու մեկնաբանությունները:

Ատենախոսի ուշադրությունից չի վրիպել, որ մաթեմատիկական կրթության ստոխաստիկական բաղադրիչը այն հազվագյուտ ուղղություններից է, որը, պարունակելով հանդերձ նվազագույն քանակի գիտելիքներ ու տեղեկություններ, առնչվում է բնության ու հասարակության տարաբնույթ երևույթներին և ունի կիրառական մեծ նշանակություն:

Կցանկանայինք մատնանշել մի շարք բացթողումներ:

1. Կարևորված է ստոխաստիկական մտածողության ձևավորման ու զարգացման հիմնախնդիրը, սակայն չի շոշափված գիտելիք-մտածողություն համակարգի կառուցվածքային առանձնահատկությունը: Պարզաբանենք, գիտելիքի յուրացումից չկա անմիջական անցում մտածողության ձևավորմանն ու զարգացմանը: Տեղեկությունների ձեռքբերումն ու գիտելիքի յուրացումը միջնորդավորված է՝ կապված մտածելակերպի ձևավորմանն ու մտածողության զարգացման խնդիրների հետ: Այդ միջնորդներից մեկը հենց մաթեմատիկական մեթոդներն են:
2. Չի նկատվել արդյունավետ ընդլայնման խնդրի իրականացման հիմնական խոչընդոտը՝ մի բանի ընդլայնումը ենթադրում է մեկ այլի կրճատում:
 - Նպատակների ընդլայնման տեսակետից հակադրված են գիտելիքների անհրաժեշտ ծավալի յուրացումը՝ այլ որակական հատկությունների ձեռքբերման խնդիրներին:
 - Բովանդակության արդյունավետ ընդլայնման տեսանկյունից հակադրված են ծրագրային նյութի ծավալը՝ ուսումնական պլանով նախատեսված ժամաքանակին:
3. Հիմնավորված է խնդրի և՛ կրթական, և՛ հանրակրթական նշանակությունները, սակայն մեթոդական համալիրը սևեռված է միայն կրթական նշանակության վրա: Առանձնացված չեն բովանդակության ստոխաստիկական բաղադրիչի հանրակրթական նշանակության իրականացման դժվարություններն ու դրանց հաղթահարման հնարավորությունները:

Այսուհանդերձ, ատենախոսը կատարել է մաթեմատիկական կրթության բարեփոխմանը նպաստող շատ օգտակար աշխատանք՝ հանդես գալով որպես գիտահետազոտական ունակություններով օժտված մասնագետ:

Անժելա Իսրայելի Մինայանի՝ «Հավանականությունների տեսության եվ մաթեմատիկական վիճակագրության տարրերի դասավանդման առանձնահատկությունները հանրակրթական դպրոցում» վերնագրով թեկնածուական ատենախոսությունը բոլոր չափանիշներով համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետով թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ ատենախոսը՝ Անժելա Իսրայելի Մինայանը արժանի է ԺԳ.00.02 թվանիշով «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (մաթեմատիկա) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման:

Ֆիզ.-մաթ. գիտ. թեկնածու, դոցենտ, մանկավ. գիտ. դոկտոր

Մ. Սևեթ

Մանուկ Մկրտչյան

Մանկավարժական գիտությունների դոկտոր Մանուկ Մկրտչյանի ստորագրությունը հաստատում եմ

Խ. Արովյանի անվան ՀՊՄՀ-ի գիտական քարտուղար

մ.գ.թ., դոցենտ

Եսթրա Խի-Զոզոբ



Մարիամ Իսպիրյան
Մարիամ Իսպիրյան